# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն ՄԲԿ-ԷԱԱՊՁԲ 2026-21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 15 | Ֆրանկլաբ | Էնզիմեքս L9 | Էնզիմեքս L9 | Ֆրանկլաբ | ԷՆԶԻՄԵՔՍ L9 1լ- Ախտահանիչ խտանյութ ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների՝ էնդոսկոպների ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար: Իրենից ներկայացնում է կանաչ գույնի, բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլ դիմեթիլ ամոնիումի քլորիդ (ՉԱՄ), |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ֆերմենտների համալիր (լիպազա,<br>ալֆա-ամիլազա, պրոտեազա),<br>ինչպես նաև ֆունկցիոնալ<br>բաղադրամասեր՝ ՄԱՆ<br>(մակերեսային ակտիվ նյութեր),<br>ներկանյութ, բուրանյութ, ջուր և<br>այլն: Ներկայացվող ապրանքը<br>պարունակում է նաև կոռոզիայի<br>ինհիբիտորներ (կազմի մեջ<br>կոռոզիոն ինհիբիտորի<br>առկայությունը հաստատված է<br>օգտագործման հրահանգով):<br>Առաջարկվող ախտահանիչ նյութը<br>իր բաղադրությունում չի<br>պարունակում որպես ակտիվ<br>բաղադրիչներ քլոր, ալկոհոլ:<br>Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ<br>ծավալի պոլիէթիլենային տարա<br>համապատասխան չափիչ<br>բաժակով: 1լիտր խտանյութից<br>պատրաստվում է 0,5% 200 լիտր<br>աշխատանքային լուծույթ, որն<br>ապահովում է հակաբակտերիալ<br>`գրամդրական և գրամբացասական<br>մանրէների (ներառյալ՝<br>տուբերկուլյոզի<br>միկոբակտերիաները),<br>հակավիրուսային (ներառյալ<br>արտաընդերային հեպատիտները, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հականնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը 5-30 րոպեում (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով), ինչպես նաև օժտված է ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: : Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը 15C- 25C է: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 14 օր է, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 7,8-8,8: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ, երաշխավորված է Storz, Olympus, Fujinon, Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄԲԿ-ԷԱԱՊՁԲ 2026-21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 15 | | | | | |